ՀՀԵԵԿ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության Կենտրոնական խորհրդի հայաստանյան ներկայացուցիչների ժողով՝ նախագահությամբ ՀՀԵԵԿ ընդհանուր պատասխանատու Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի: Ժողովին ներկա էր նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ՀՀԵԵԿ հոգևոր պատասխանատու Տ. Մաղաքիա աբեղա Ամիրյանը:

Ժողովին ներկայացվեցին ՀՀԵԵԿ հանձնախմբերի գործառույթները, թեմատիկ քննարկումների արդյունքները, առաջիկա գործողությունների ծրագիրը և առկա խնդիրները:

Քննարկվեց նաև Կենտրոնական խորհրդի հաջորդ նիստի գումարման վայրի և ժամանակի հարցը, ինչպեսև գործադիր մարմնի տեղական ժողովի հարցը, որը տեղի կունենա հոկտեմբեր ամսին: Մինչև գործադիրի ժողովը տեղի կունենան թեմական այցելություններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ